ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված անձ՝ Տաթևիկ Խաչատրյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2022 թվականի նոյեմբերի 27-ից 29-ը ներառյալ:

Հրավիրող կողմը՝ Ավստրիայի Հանրապետության, Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիա:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) անդամ պետությունների վեհաժողովի 11-րդ նստաշրջանին՝ Ակադեմիայի և անդամ պետությունների ներկայացուցիչների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ վերջիններիս կողմից ձեռնարկած և ապագայում նախատեսվելիք քայլերը Ակադեմիայի հետ համագործակցության շրջանակներում ներկայացնելու նպատակով:

Քննարկված թեմաները՝ Նստաշրջանի ընթացքում անդամ պետությունների ներկայացուցիչները հանդես են եկել ելույթներով՝ յուրաքանչյուրը ներկայացնելով իր երկրում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առաջատար փորձը և գրանցած հաջողությունները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Վեհաժողովը 11-րդ նստաշրջանի նախագահ է ընտրել Նորին Գերազանցություն պարոն Էպիֆան Բալլո Զորոյին՝ Կոտ դ'Իվուարի Լավ կառավարման խթանման, կարողությունների զարգացման և կոռուպցիայի դեմ պայքարի նախարարին, ով փոխարինեց Նորին Գերազանցություն պարոն Իվո Շրամեկին՝ Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայում Չեխիայի Հանրապետության մշտական ներկայացուցչին:

Ակադեմիայի Դեկան և Քարտուղար պարոն Մարտին Շտելցերը ներկայացրել է 2021-2024 թվականների աշխատանքային ծրագրի իրականացման հաշվետվությունը: Քննարկվել են կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում ընթացիկ և ձևավորվող միտումներն ու մարտահրավերները:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ակադեմիայի անդամ պետությունների վեհաժողովի 11-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել են բանաձևեր ընդհանուր հարցերի, կոռուպցիայի չափման, Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի 2023 թվականի բյուջեի, ինչպես նաև անդամ պետությունների վեհաժողովի հաջորդ նստաշրջանի վերաբերյալ:

Հակակոռուպցիոն քաղաքականության
մշակման և մոնիթորինգի վարչության
մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ՝

Տաթևիկ Խաչատրյան